ԱԹՈՌԻԿ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Գտնվում է Դեբեդի ձախ ափին, բլրալանջին, Ալավերդուց 3 կմ դեպի Ախթալա, թունելի մոտ: Փոքրիկ շեն է եղել և լքվել է դարեր առաջ: Բնակատեղին գրանցված է Հաղբատի վրա:

Այս վայրը ավանդաբար համարվում է սլաքմիջ Վարդան Բարձրբերդցու մենարանատեղին:

494. ԽԱՉՔԱՐ. խոշոր, լավ մշակված, ձախ եզրը կոտրված լայն քիվով, բլրի գլխին, մենավոր ծառի մոտ, ընկած ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի մոտ:



Խաչաթևերի հանգույցում.

ՏՐ ԱՅ
ՅԱ ՔՍ

Քիվին, 3 տող.

ԿԱՄԱՒՆ ԱՅ. Ի Տ[Ե]ՐՈՒԹԵ[Ա]ՆՆ ՊԱՐՈՆ ՍԱԴ-
ՈՒՆԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ[Ա]Ն ՏՐ Յ-
ՈՎԱՆԻՍԻ ԱՆՅԱԽԹ ԳԻՏՆԱԿԱՆԻ

Պատվանդանին, շարունակությունը, 7 տող.

ՄԵՔ՝ ԾԱՌԱՅ ՍԲ ՆՇԱՆԻՍ ՄԱՆՈՒԷԼ, ՄԽՈՒԿ Ե[Ւ] ՆԵՐՍԷՍ:
ԳՐԻԳՈՐԷՍ, ՅՈՀԱՆԷՍ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ Յ-
ԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶԱՒՐԱՒԱՐԻՆ ԵՒ ՏՎԱՔ ԳԵՂԻՍ
ՏԵՂ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԵՐ ՀԷՐԷՆԻ ՀՈՂԻ՝ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ: ԵՒ ՈՐ-
Ք ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍՐԲՈ ՆՇԱՆԻՍ՝ ՅԻՇԵՑԷՔ ԶՄԵԶ ԵՒ ԶԾՆՈՂՍՆ
ՄԵՐ ԵՒ ԶՀՈԳԵՒՈՐ ԶԱՒԱԿՍՆ ՄԵՐ ԶՊԵՏՐՈՍ, ԶՊԱՒՂՈՍ, ԶՄԱՆՈՒԷԼ:
Ի ԹՎԻՍ : ՉԻԸ : (1279):

Հրատ. Ղաֆադարյան. Հաղբատ. 265 (քաղել է Ղրիմեցու ձեռագրից). Շահինյան. ՀՄԿՀ. 58:

Ծանոթ. Ղրիմեցին բաց է թողել ակնախաչի տերունական 4 բառերը, *Մխուկ (Մեխակ) եւ Ներսէս* անունները, *եւ տվաք գեղիս տեղի գերեզմանի ի մեր*, բայց լրացրել է տերունական բառերը, որոնք խորհրդանշում են խաչելության-տանջամահության և փրկագործության գաղափարը: Այս նպատակը ներհատուկ է նաև Տերունական կոչվող (Հաղբատ, Հոռոմայր, Օձուն, Նեղուց), ինչպես և բոլոր խաչքարերին առհասարակ:

Պատվանդանի առաջին տողում՝ ՄԽՈՒԿ անձնանվան Մխ կցագրի աջ ստորին մասում որոշակի փորագրված է Ա-ի աջաթեք փոքր ստեղնը, այսինքն պետք է կարդալ ոչ թե Մխուկ այլ Մախուկ (խմբ.):

495. ՏԱՊԱՆԱՔԱՐ, Մեծ գավթի արևմտյան կողմում, ուղղանկյուն սալ, 3 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ	ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ
ԶԱՔԱՐԻԱ Վ	ԶԱՔԱՐԻԱ Վ
ԱՐԴԱՊԵՏ ԹՎ ՌՃԿԸ	ԱՐԴԱՊԵՏ[ԻՆ], ԹՎ[ԻՆ] ՌՃԿԸ (1719):

Ծանոթ. Տապանագիրը տեղ չի գտել սույն պրակում: XVIII դարում վանքում առաջնորդել է Զաքարիա Պաքինյան Տփղիսեցին, սակայն 1752-1770 թթ.: Զաքարիա վարդապետը, հավանաբար, վանքի երևելի միաբաններից է եղել (խմբ.):

496. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ, մոտքի ծախ կողմում, որմնասյան վրա, 5 տող.

ԱՌԱՋՆՈՐԴ[Ի]	ԱՌԱՋՆՈՐԴ[Ի]
ԹԵԱՄԲ ՍԲ ՈՒԽՏԻՍ Մ[Ա]Թ[Ե]	Թ[ԵԱՄ]Բ ՍԲ ՈՒԽՏԻՍ Մ[Ա]Թ[Ե]
ՈՍ ԵՊ[ԻՍ]ԿՈ[ՊՈՍԻ[Ն]	ՈՍ ԵՊ[ԻՍ]ԿՈ[ՊՈՍԻ[Ն]
ԷՐ	ԷՐ
ԹՎ[ԻՆ] ՌԼԵ (1586):	ԹՎ[ԻՆ] ՌԼԵ (1586):

Հրատ. Ղրիմեցի (ձեռագիր), 178, Ղաֆադարյան, Հաղբատ, 266:

Ծանոթ. *Կ. Ղաֆադարյանի և պրակի կազմողների աչքից վրիպել է այս վկայագիրը, ըստ այդմ էլ այն զետեղվել է չպահպանված արձանագրությունների բաժնում (խմբ.):*

497.ՏԱՊԱՆԱՔԱՐ. Մեծ գավթի արևմտյան կողմում, ուղղանկյուն սալ, 10 տող.

ԱՅՍԷ ՀԱՆԳ	ԱՅՍ է ՀԱՆԳ
ԻՍՏԲԱՐ ՍԵՂԵՊ	ԻՍՏ ԲԱՐՍԵՂ ԵՊ
ԻՍԿՊՈՍ ԵԱԻԱՋ	ԻՍԿ[Ո]Պ[Ո]ՍԻ, ԵԱ Ի ԱՋ
ԳԵԹՌՄ ԱԵՅԻ	ԳԵ ԹՌՄԱՆԵՅԻ,
ՈՐԲԱՋՌ ՄԱՄԻԱ	ՈՐ ԲԱՋՌՄ ԱՄԻ Ա
ՍՏԿԱՅ ԻԵԻՋԿ	ՍՏ ԿԱՅԻ ԵԻ ՋԿ
ԱՆԻՄԱՍ ՄԱՆՅՈ	[Ե]ԱՆՍ ԻՄԱՍՏ ԱՆՅՈ[Ի]
ՅԻ :ԻԷ: ԱՄԱՌ	ՅԻ :ԻԷ: (27) ԱՄ ԱՌ
ԱՋՆՈՐԴ ԿԱՅԻ	ԱՋՆՈՐԴ ԿԱՅԻ
ԹՆ:ՌՃ ԾԲ:	ԹՎ[Ի]Ն :ՌՃԾԲ: (1703):

Հրատ Ղրիմեցի (ձեռագիր), 178, Ղաֆադարյան, Հաղբատ, 266:

Ծանոթ. *Այս տապանագիրը նույնպես վրիպել է Կ. Ղաֆադարյանի ուշադրությունից, ուստի նա գրքում զետեղել է Ղրիմեցուց քաղվածը (խմբ.):*

498. ՏԱՊԱՆԱՔԱՐ. սեղանատան մուտքի մոտ, 5 տող.

ԱՅՍ ՀԱՆ	ԱՅՍ ԷՅԱՆ
ԳԻ ՍՏՏՐ ԹԹ	ԳԻՍՏ ՏՐ
ՂԱՏԶԱՐ	ՂԱՁԱՐ
ԲԱՀԱՆԻՆ	ԲԱՅԱԼՆԱԻԻՆ
ԹՎԻ ՈՇԽԵ	ԹՎԻՆ ՈՇԽԵ(1696):

Ծանոթ.Տապանագիրը տեղ չի գտել պրակի տեքստում, այն գրառվել է վիմագրության բաժնի արշավախմբի կողմից (խմբ.):

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ՆԿԱՏՎԵԼ ԿԱՄ ՉԿԱՆ -

499. Մեծ տաճարի (Ա. Նշանի) արևելյան պատի ճակատին.

Ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի Անհողինի Գուրգենայ որդւոյ Բագրատունւոյ թագաւորին՝ ես Ծիրվասան, որդի Աբասայ արքային եւ ամուսինն իմ Ռուսուդան գնեցի իմ հալալ ընչիւքն Ուքանի որդեացէն – Անագէթն, Մամխուտն, Բազէնքն, Բերդկայ այգին՝ որ ջրանցի արխի տակն է, և Նորթոլանց տունն և Աւէտն իւրեանց հայրենիքն գանձագին արարի և եւոու իմ սուրբ Նշանիս ընծայ, և այլ արդիւնք: Առաջնորդ հայր Սիմէաւն և միաբանքս սահմանեցին տարին երեք քառասունք կատարեն անխափան: Ով խափանէ, կամ հանել հնարի յիմոց կամ յաւտարաց մասն Յուդայի և Կայենի առցէ, իմ մեղացս և իմ ազգի մեղացն տէր է և մի տեսցէ գփառս որդոյն Աստուծոյ, իսկ կատարիչքն աւրհնին ի տեառնէ. ամէն: Թիւն Նխե:

Հրատ. Երզնկյանց. 23-24. ՎՏ. 11. Դաֆադարյան. Հաղբատ. 264:

Ծանոթ. Այս և մնացած դեպքերում խուսափում ենք «Բնագրերին» որևէ միջամտություն անելուց: Քանիցս կատարվել են ստուգումներ, բայց Ա. Նշանի արևելյան պատին նման արձանագրություն չկա, իսկ վերանորոգման միջամտություններն այնպիսին չեն, որ արձանագրված բոլոր քարերը հանված լինեին:

500. Տապանաքար մեծ գավթի մեջ (ԺԳ դ.).

Սմբատ որդի Գարբանիէլի:

Հրատ. Զալալյանց. Ա. 79. Դաֆադարյան. Հաղբատ. 264:

501. Տապանաքարի նույն տեղում (ԺԳ դ.).

Դուլ:

Հրատ. Զալալյանց. Ա. 79. Դաֆադարյան. Հաղբատ. 264:

502. Վանքի պարսպի մեջ ագուցված փոքրիկ խաչքարի վրա.

Ի թուիս ՈՂԵ (յամի 1246) յառաջնորդութեան տեառն Համազասպայ (շինեցաւ)...

Հրատ. Դրիմեցի. 2. Երզնկյանց. 59. «Ազգ. հանդ.». VII-VIII. 411. ՎՏ. 89. Դաֆադարյան. Հաղբատ. 260:

Ծանոթ. Այս և հաջորդ մի շարք արձանագրությունները Կ. Դաֆադարյանը վերցրել է Դրիմեցուց: Դրանք թողնում ենք անփոփոխ:

503. Գերեզմանաքարի վրա, տեղը չի նշված.

Այս է հանգիստ Աւետիս արիեպիսկոպոսին, վերստին նորոգող եւ հաստատող պարսպին. թուին ՈՃԻԶ (1677):

Հրատ. Ղրիմեցի, 2. Ղաֆադարյան. Հաղբատ, 260:

504. Զանգակատան մոտ, տեղահանված խաչքարի վրա.

ՆԽԶ (997) թուականիս ... ի հայրութեան Սիմեւոնի կանգնեցի զսուրբ խաչս յՕգնականութիւն ....

Հրատ. Ղրիմեցի, 21, Երզնկյանց, 55, ՎՏ, 11, Ղաֆադարյան, Հաղբատ, 260:

Ծանոթ. Սիմեւոնը (Սիմէոն) Հաղբատի առաջին վանահայրն է, մասնակցել է Ս. Նշան եկեղեցու շինարարության աշխատանքներին 991 թվին:

505. Նույն տեղում, մի այլ խաչքարի վրա.

Աստուած ողորմի Դաւիթ վարդապետին. թուին ՋՕԱ (1502):

Հրատ. Ղրիմեցի, 21, Երզնկյանց, 55, «Ազգ. հանդ.», VII-VIII, 410, ՎՏ, 175, Ղաֆադարյան, Հաղբատ, 260:

506. Մի այլ խաչքարի վրա, զանգակատան մոտ.

ՆՀԲ (1023) թուին ես Սակարս անարժան ... կանգնեցի խաչս յաւգնականութիւն հոգոյ իմոյ:

Հրատ. Ղրիմեցի, 26, Երզնկյանց, 55, «Ազգ. հանդ.», VII-VIII, 409, ՎՏ, 16, Ղաֆադարյան, Հաղբատ, 261:

507. Տապանաքար նույն տեղում (ԺԳ դ.)

Մամքանայ Շուշիկ

Հրատ. Ղրիմեցի, 21, Երզնկյանց, 54, Ղաֆադարյան, Հաղբատ, 261:

Ծանոթ. Երզնկյանի կարծիքով, սա Հաղբատի իշխան Զարեհի քույրն է, «թոռն Բաղաց թագաւորի, կին Զալալ իշխանին Խաչենայ»:

508. ԱԱԼԱՏԱՊԱՆ.

Դաւիթ:

509. ԱԱԼԱՏԱՊԱՆ.

Հասան:

Հրատ. Ղրիմեցի, 37, «Ազգ. հանդ.», VII-VIII, 475, Ղաֆադարյան, Հաղբատ, 261:

Ծանոթ. ԺԳ դարով թվագրվող այս տապանաքարերը Քաջբերունին տեղադրել է զանգակատան, իսկ Լալայանը՝ Զգրաշէն եկեղեցու դռան մոտ:

510. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Զանգակատան հարավային կողմում.

Արծան մահու կրօնաւորի,
Աստուածատուր վարդապետի.
Տեղեաւ էր սա Շինողեցի.

ի կեսօրեայ իր հասակի
Յայսմ աշխարհիս առ Տէր փոխի:
ի 1842 ամի.

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 409:

511. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Զանգակատան դռան առաջ.

Էին անեղին ժիր պաշտօնակիր.
Տէր Զաքարիան բարուն անպատիր.
Հովիւ քաջակիրթ աշխոյժ եւ ընտիր,
Արքեպիսկոպոս Էջմիածնի ծիր:
Քարոզ սուրբ տառից անխոնջ անձանձիր
Փառաց Արամեանց յար խուզախնդիր
Զարմին Գուլասպեանց վեհ արծանագիր,
Տոհմիկ Բէհբուտեանց ոստ վայելչադիր:

Այլ ա՜հ, եւ աւաղ տունկդ բարեդիր,
Զի ա՜րդ գօսացար մորշ սաղարթակիր,
Ինքներեակ հնգիւք տիօք ծաղկածիր
Ելեր ի կենացս կեանս յանախտակի:
Յետնորդք յարգուքեամբ ելցեն ի խնդիր,
Աւաղ զի յարդեացս յանգէտս կացիր.
Ողբով անդադար հեծէ վշտակիր
Ծառայ քո Գրիգոր եւ եղբայր կրտսեր.
Այլեւ աղեխարշ դառն արտասուալիր,
Ընծայէ դրուագս եւ գեղերագիր:
ի 1835 ամի Յունիսի 5 աւուրն:

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 410:

Ծանոթ. Զաքարիա արքեպիսկոպոսը Հաղբատի վանքի վերջին առաջնորդն է, որին փոքր եղբայր Գրիգորը մեծարում է գովեստի խոսքերով: Նա երիտասարդ հասակում արժանացել է արքեպիսկոպոսի աստիճանի, հռչակվել *բարուն անպատիժ*, մահացել անժամանակ՝ *ինքներեակ հնգիւք տիօք* – (9x3)+5=32 տարեկան:

512. ԽԱՉՔԱՐ. Առաջադեմ (Ս. Սիոն) մատուռի մոտ.

Ի թուին ՈԾԶ (1207) կանգնեցաւ նշանս Տէրունական ի վերայ հանգստարանի պատուական քահանայի Գրիգորոյ, որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս:

Հրատ. Ղրիմեցի. 38. Զալալյանց. Ա. 77. Երզնկյանց. 62. «Ազգ. հանդ.», VII-VIII. 413. ՎՏ. 47. Դաֆթարյան. Հաղբատ. 261:

513. ԽԱՉՔԱՐ. Նույն տեղում.

Ի թուին ՈՂԶ (1247) կանգնեցաւ խաչս ի վերայ հանգստարանի անպիտան աբեղայիցս՝ Անդրէասի, Պաւղոսի և Յովսէփի, որք երկրպագէք՝ յաղաւթս յիշեցէք:

Հրատ. Ղրիմեցի. 38. Զալալյանց. Ա. 77. Երզնկյանց. 63. «Ազգ. հանդ.», VII-VIII, 413. ՎՏ. 91. Դաֆթարյան. Հաղբատ. 262:

Ծանոթ. Կիսատ-պռատ է հատկապես Զալալյանցի մոտ:

Մեր ձեռքն ընկավ Արամ Վրույրի 1913 թ. արած այս կոտրված խաչքարի լուսանկարը, որի հիման վրա տալիս ենք վերծանությունը և գրչագիրը: Կազմողների կողմից պրակում ներկայացված վերծանությունում (ըստ Կ. Դաֆթարյանի՝ քաղված Ղրիմեցուց) առկա են մի շարք վրիպումներ՝ թուին, հանգստարանի, Անդրէասի, Յովսէփի (խմբ.):

514. ԽԱՉՔԱՐ. այգիները տանող ճանապարհին.

Յառաջնորդութեան տեառն Համազասպայ եպիսկոպոսիս Հաղբատայ ... ես ... կանգնեցի զխաչս. գիս և զծնողսն իմ և զԳրիգոր յիշեցէք ի Քրիստոս: Ի թուին ՉԴ (1255) կանգնեցաւ սուրբ Սարգիս:

Հրատ. Ղրիմեցի, 39, Երզնկյանց, 69, «Ազգ. հանդ.», VII-VIII, 417, ՎՏ, 98, Ղաֆադարյան, Հաղբատ, 262:

515. ԽԱՉՔԱՐ. Նույն տեղում.

Յառաջնորդութեան տէր Յովանիսի, և ի տէրութեան Զաքարէի և Իւանէի՝ ես Յովսէփ ... Կանգնեցաք խաչս ... որք երկրպագէք՝ յիշեցէք ի Քրիստոս, եւս առաւել զՅովանէս, ի թուիս ՈԾԸ (1209):

Հրատ. Ղրիմեցի, 39, Երզնկյանց, 69, Ազգ. հանդ., VII-VIII, 417, ՎՏ, 50, Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, 262:

516. ԽԱՉՔԱՐ. Նույն տեղում.

Ի թուին ՈԽԸ (1199). ես Մխիթար կանգնեցի զխաչս մեծ յուսով ի փրկութիւն հոգոյ իմոյ՝ որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս և զծնողսն իմ:

Հրատ. Ղրիմեցի, 39, Երզնկյանց, 70, ՎՏ, 40, Ղաֆադարյան, Հաղբատ, 262:

517. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տեղն անորոշ.

Թուին ՈԻ (1171), Վարդան:

Հրատ. Ղրիմեցի, 40, Ղաֆադարյան, Հաղբատ, 262:

518. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Փոքր գավթի մեջ, Ամենափրկիչ խաչքարի մոտ.

Այս է հանգիստ Դուդայ տիկնոջ, յազգէ Մամիկոնեանց:

Հրատ. Երզնկյանց, 46, Ղաֆադարյան, Հաղբատ, 263:

Ծանոթ. Կ. Ղաֆադարյանը ժամանակը համարում է անորոշ, հավանաբար ԺԳ դ.:

Կարծում ենք, որ հանգուցյալը Փոքր գավթի 1220 թ. վիմագրում հիշված Պածածի կողակից Դուդան է (Խմբ.):

519. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գրատան մուտքի մոտ, հավանաբար ԺԸ դ.

Մինչ օրհաս մահու առ իս ժամանեաց
Բժիշկ բժշկեա, արդէն զիս կոչեաց.
Յորմէ յարութեան յոյս մահկանացուաց
Սպասեմ ընդունել յետ աստի կենաց:

Հրատ. Երզնկյանց, 50, Ղաֆադարյան, Հաղբատ, 263-264:

520. ԽԱՉՔԱՐ. եղել է վանքի մատուռի մոտ.

Ի թուին ՌԺԷ (1568): Ես Սարգիս վարդապետ կրօնաւոր իմ եղբարօքս կանգնեցաք զսուրբ խաչս ի ճանապարհիս, որ եւ զուգեցաք զայգիս իւր սնառօվքն որ մին կողմն վանքի մատուռի այգին, մին կողմն վանքի բոլոր մեծ այգին, որոց մէջն մին կարմիր խաչ կայ, մին կողմն ժիվանքայ ջուրն է, որ իմ հայրենի այգին էր, տուի վախմն Հաղբատայ սուրբ Նշանին: Ով խափանէ կամ խլել ջանայ յիմոց կամ յօտարաց՝ սուրբ Նշանի խռովանքին գայ և նզոուած է յԱստուծոյ և ԳՆԺԸ հայրապետացն. ամէն:

Հրատ. Երզնկյանց, 70-71, ՎՏ, 179, Ղաֆադարյան, Հաղբատ, 264:

Ծանոթ. Սնառօվքն- սնար, սնարք բառն է, որ նշանակում է գլխակոթ (Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հ. Բ, II հրատ., Եր., 1981, էջ 724, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, էջ 235, Ատ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Դ, էջ 235):

Կարծում ենք՝ այստեղ նշված է «սինոր», «սրտ» բառը, որ նշանակում է սահման (խմբ.):

521. ԽԱՉՔԱՐ. Արոսիկ գյուղատեղում, պատվանդանին.

Կանգուն Աստուծոյ ես Խաչենեկս և ամուսին իմ Արգոն, և Խաչերես, և Գրիգոր կանգնեցաք գլուխս, կարեցաք զգերեզմաններս ի քարէ՝ մեծ աշխատունակութեամբ, մսխեցաք Դ6 (400) ոսկիտակ: Ով կարդայ և «Աստուած ողորմի Խաչենիկին և իր ննջեցելոցն» ասէ:

Հրատ. Դրիմեցի (ձեռագիր), 126, Ղաֆադարյան, Հաղբատ, 265:

522. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. Կայան բերդի մոտ, կամրջի գլխին.

Կամաւ բարերարին Աստուծոյ. ես տէր Յովհաննէս յուսով շինեցի զկամուրջս և կանգնեցի զխաչս:

Հրատ. Դրիմեցի (ձեռագիր), 126, Ղաֆադարյան, Հաղբատ, 265:

Ծանոթ. Դրիմեցին վկայում է, որ տակավին իր ժամանակ կամրջի վերջին մնացորդները հազիվ նշմարվում էին: Կամուրջը վերականգնվել է, իսկ խաչքարը կամ պատվանդանը չի գտնվել:

Այս է հանգիստ Բարսեղ եպիսկոպոսի,
Ես էի յազգէ Թումանեցի,
Որ բազում ամս ի յաստ կացի,
Իէ ամ առաջնորդ կացի
թիւն ՌՃԾԲ (1703):

523. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Խաթունաշեն Ս. Աստվածածին եկեղեցու մուտքի առաջ, 13 տող.

Թ[վին] ՈՄԿԱ (1812):
ԵՄ ԵԴԵԱԼ ՅԱՅՍՄ
ՏԱՊԱՆԻՍ ՀՈՒՓՍԻ
ՄԷՍ ՈՂՈՐՄԵԼԻ ԷԻ ԱՄՈՒ
ՍԻՆ ԲԱՐԷՊԱՇՏԻ ՏԵ
ՂՈՅՍ ՍՈՎՐԱՒ ՄԱՐ
ՏԻՐՈՍԻ. ՅԱՆԺԱՄԱՆԱԿ
ԿԵՆԱՑ ԵԼԻ ՏԱՆԵԱՑ
ԻՄՈՑ, ՍՈՒԳ ՄԵԾ
ԹՈՂԻ: ՈՐՔ ՀԱՆԴԻ
ՊԻՔ ԱՅՍՄ ԱՐՉԱՆԻ
Ի ՄԻ ԲԵՐԱՆ ՏՈՒՔ
ՈՂՈՐՄԻ:

Հրատ. Սուրադյան, ՀՎԱ, 194:

Ծանոթ. Նույն տապանագրի վրացերեն տարբերակում Հռիփսիմեն համարվում է *կյանքից անժամանակ հեռացած դժբախտ:*

524. ԱՂԲՅՈՒՐԻ ԼՎԱՋԱՆ. քարաշեն, գյուղի աղբյուրից արևելք. Սուրբ Լուսի լեռան վրա.

Զովացուցէ Տէր զհոգին
Անտոն ա[ղ]քեպիսկոպոսին.

Աստի մինչեւ ական տեղին
Նոր նորոգեաց արդեամբ անձին.
Տեղեաւ էր սա Երեւանցի
Բնիկ միաբան էջմիածնի:
Ի 1827 ամի:

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 412:

Ծանոթ. Լալայանը հաղորդում է, որ Անտոն արքեպիսկոպոսը Հաղբատ է եկել Եփրեմ կաթողիկոսի հետ՝ տարագրության մեջ չլքելով հովվապետին: Ստացվում է, որ այդ ուղևորությունը երկար է տևել, և կաթողիկոսը Ծործորեցու գերեզմանին, իսկ ուղեկցորդը չորս տարի անց՝ ջրակունքում ջրահավաք ավազան է կառուցել:

Ծ Ա Ղ Կ Ա Շ Ա Տ

Փոքրիկ գյուղ է Հաղբատից հարավ-արևմուտք, Կիստոմ գետակի աջակողմյան վտակներից մեկի աջ ափին:

525. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉՔԱՐ. հենած գյուղամիջյան եկեղեցու պատին, թիկունքին.

ԿԱՆԳՆԵՑ /ԱՐ/ ՀԱԿ/ ՄԵ ԱԼՎԱ /ՐՊԱՅ ԵՒ ԻՄ
ԱՄԲԻՆԵ ԱՒԱԳ ԵՂԲԱՐ ՄԵՐ ԴԱՒԹԻ:
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԻՇԵՑԵՔ Ի ՏՐ:
ՀՊՎԱ

526. ԽԱՉՔԱՐ. գյուղից 1,5 կմ արևմուտք, նորաշեն մատուռի մեջ, քիվին, ճակատին և խաչքների միջև 5 տող.

ՍԲ ԽԱՉՍ Բ[Ա]Ր[Ե]Խ[Ա]
ԻՍ Է ..ԳԻՐ ՎԱՐԴԻ
Ն ....ՆԱՄ:
ՔՍ ԱՇ:
ԹՎ[ԻՆ]:ՈՇԶ: (1207):
ՀՊՎԱ

Ծանոթ. Արձանագրությունների վերծանման դժվարությունները չեն հաղթահարվել, և ընթերցումները թերի ու անորոշ են:

Ն Ե Ղ Ո Ւ Ց

Հնում կոչվել է *Նեղոց*՝ ավարառու, արյունարբու լեզգիներին դիմակայելու, նեղելու և հաղթելու իրադարձության առթիվ և ոչ տեղանքի նեղության պատճառով: Գտնվում է Ախթալայից մի փոքր հարավ-արևմուտք: